ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07

15 հուլիսի 2019 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 (յոթ) անդամներ:

Բացակա էին Ավետիք Ասոյանը, Հայկազ Բաղդասարյանը, Վարդան Սուքիասյանը և Հայկ Վարդևանյանը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը և համայնքի ղեկավարի խորհրդական Սարգիս Ղազարյանը,

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի բարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են յոթը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

<u>Լսեցին</u>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15 –Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1) «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին» մասնակցության հայտը հաստատելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 46-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեց որոշման նախագիծը:

<u>Լսեցին</u>

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ» ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի ու հիմք ընդունելով Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագիրը»՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի մասնակցության հայտը՝ համաձայն հավելվածի:

2.Լիազորել Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 27-ի N 41-Ա կարգադրությամբ ստեղծված նախաձեռնող խմբի անդամներին «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին» մասնակցության հայտը Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին ներկայացնելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 47-Ա/

Օրակարգի հարցը սպառվեց:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

1.ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ _____

2.ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ _____

3.ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ _____

4.ԽԱՆՋԱԴՅԱՆ ԱՐՄԱՆ _____

5.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ _____

6.ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ _____

7.ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ **Հ. ԲԱԼԱՍՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ **Լ. ԱՎՈՒՇՅԱՆ**